ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

1987 թ. սեպտեմբերի 21—23-ը Երևանում տեղի ունեցավ հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովը։ Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին ավելի քան հարյուր լեզվաբան-հայագետներ Սովետական Միության գիտական կենտրոններից (Մոսկվա, Լենինգրադ. Վիլնյուս, Թբիլիսի, Դուշանբե, Ստեփանակերտ), արտասահմանյան 10 երկրներից (ԱՄՆ, Բելգիա. ԳՖՀ, Դանիա, Իտալիա, Ճապոնիա. Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Լեհաստան, Հունգարիա), մեր հանրապետության բուհերից և գիտահետազոտական ինստիտուտներից (Երևանի պետական համալսարան, Մատենադարան, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտ, Լենինականի մանկավարժական ինստիտուտ, Կիրովականի մանկավարժական ինստիտուտ)։

Լայն ու բազմազան էր գիտաժողովի թեմատիկան, որն ընդգրկում էր հայոց լեզվի ուսումնասիրության տարբեր բնագավառները։ Գիտաժողովի լիագումար և մասնաճյուղային նիստերում կարդացվեցին շուրջ 90 զեկուցումներ, ինչպես նաև լսվեցին բառարանագրության, տեքստաբանության և բարբառագիտության հարցերին նվիրված 14 զեկուցումների ամփոփիչ հաղորդումներ։ Գիտաժողովի աշխատանքներն ընթանում էին երեք մասնաճյուղով՝ ա) հայերենի համեմատական քերականության, բ) լեզվի պատմության և բարբառագիտության. գ) տեքստաբանության, բառագիտության և բառարանագրության։

Պետք է նշել. սակայն, որ գիտաժողովի թեմատիկան շատ ավելի լայն էր. և այս բաժանումը որոշ չափով պայմանական է։

Հայերենի համեմատական քերականության մասնաճյուղում կարդացված զեկուցումները ընդգրկում էին հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության գրեթե բոլոր բնագավառները՝ հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն, բառաքննական-ստուգաբանական խնդիրներ։ Քննարկման նյութ դարձան նաև ընդհանուր-տեսական հարցեր՝ կապված հայերենի և հին հնդեվրոպական լեզուների փոխհարաբերության, հ.-ե. նախաձևերի վերականգնման սկզբունքների, նախահայերենի հնդեվրոպական հիմքի, հ.-ե. նախալեզվի բարբառային մասնատվածության և հայերենի ծագումնաբանական կապերի և այլ պրոբլեմների լուսաբանության հետ։

Լիագումար նիստում լսվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Բ. Աղայանի «Հայկական տոմարական համակարգը և հայոց «թվականները» զեկուցումը։ Խոսելով հայկական Մեծ և Փոքր տոմարների մասին, զեկուցողը նշում է, որ դրանք ոչ այլ ինչ են. եթե ոչ զատկացանկեր։ Հենվելով մատենագրական և տոմարագիտական տվյալների վրա. Աղայանն ապացուցում է, որ հայոց նոր զատկացանկը՝ էասյան պարբերաշրջանի համաձայն կազմել է Աթանաս Գլակավանեցին։

Հայերենի և հին հնդեվրոպական լեզուների փոխհարաբերության հարցերը միշտ էլ գտնվել են հնդեվրոպաբանների ուշադրության կենտրոնում։ Այս առումով ուշագրավ էր Գ. Ջահուկյանի (Երևան) «Հայաստանի լեզվավիճակը և հայերենը» զեկուցումը. որը կարդացվեց լիագումար նիստում։ Ի տարբերություն և ի լրացումն այս հարցի վերաբերյալ ուրիշների և իր՝ զեկուցողի ավելի վաղ հայտնած կարծիքների [1. հայասերենը հայերենի ուղղակի հիմքն է (Է. Ֆոռեր, Կ. Ռոտ, Պ. Կրեչմեր. Ս. Երեմյան) 2. Հայասայի և հայերի ինքնանվանման նմանությունը պատահական է (Ի. Դյակոնով), 3. հայասերենը հայերենից տարբեր խեթալուվական բնույթի լեզու է. որ հայերենում պահպանվել է որպես ենթաշերտ (Գ. Ջահուկյան)], զեկուցողը փորձ է անում հաստատելու, որ Հայասայի հիմնական լեզուն եղել է հայերենը. և որ հայկական տարրը գերակշռող դիրք է գրավել հայասական պետության մեջ։ Դրա վկայությունն են հայասական այն հատուկ անունները. որոնք հայկական բնույթ ունեն և որոնց ձևերը միջանկյալ օղակ են հնդեվրոպական նախալեզվի և հայերենի միջև։ Վերլուծելով լեզվական այս և այլ կարգի փաստերը, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ հայերը Հայկական բարձրավանդակում և հարակից շրջաններում ապրել են մ. թ. ա. XII դարից առաջ, այսինքն ավելի վաղ այն ժամանակից, որին սովորաբար վերագրվում է հայերի գալուստը Փոքր Ասիա։

Նախահնդեվրոպական հնչյունական, հատկապես բաղաձայնական համակարգի վերաբերյալ նոր տեսությունների՝ մասնավորապես «ձայնածերպայինների տեսության» («глоттальная теория») հայեցակետից հայերենի բաղաձայնական համակարգի վերամեկնաբանմանն էր նվիրված Թ. Վ. Գամկրելիձեի (Թբիլիսի) զեկուցումը։ Նախահնդեվրոպական լեզվի բաղաձայնական համակարգի համար ձայնածերպայնացած բաղաձայնների շարքի կանխադրումը որոշ փոփոխություններ է մտցնում հ.-ե. բաղաձայնական համակարգի ձաղման ու կազմավորման ավանդարար ընդունված պատկերացումների մեջ։ «Ձայնածերպայինների տեսության» լույսի ներքո նախահնդեվրոպական բաղաձայնական համակարգին ավելի մոտ են բաղաձայնական տեղաշարժով բնութագրվող լեզուների (գերմաներեն, հայերեն, խեթերեն) բաղաձայնական համակարգերը, քան հին հնդկերենի բաղաձայնական համակարգը, ինչպես ընդունված էր դասական հնդեվրոպաբանության մեջ։ Այս առումով հին հայերենի բաղաձայնական համակարգի, մասնավորապես պայթականների ենթահամակարգի վերլուծությունը հիմք է տալիս բացառիկ հնատիպ համարելու հայերենի բաղաձայնական համակարգը, որը նախահնդեվրոպական պայթականների համակարգի համեմատությամբ էական փոփոխությունների չի ենթարկվել։

Համանման եզրակացության է հանգում Օ. Ս. Շիրոկովը «Հնդեվրոպական նախալեզվի բարբառային մասնատվածության խնդիրը և հայերենի ծագումնաբանական կապերի հարցը» զեկուցման մեջ։ Նա նշում է հնատիպ հատկանիշների առկայություն ոչ միայն հայերենի հնչյունական համակարգում (բաղաձայնների, վանկարար ռնգայինների արտացոլումը), այլև ձևաբանության մեջ (նախահար մասնիկներ, երկրորդական հոլովների ճյուղավորված համակարգ), հատկանիշներ, որով հայերենը մտնում է հ.-ե. այն հնագույն բարբառային տարածքի մեջ, որն ընդգրկում է նաև թրակերենը, հունարենը, արիական լեզուները։

Հ.-ե. լեզվի՝ իբրև ծագումնաբանորեն ցեղակից լեզուների ելակետային վիճակի, նախաձևերի վերականգնման խնդրին է անդրադառնում Է. Գ. Թումանյանը (Մոսկվա)։ Հիմք ընդունելով ձևաբանական մակարդակի վերլուծության արդյունքները, նա առաջարկում է նախաձևերի հավաստի վերականգնման չափանիշներ։

Նախահայերենի հնդեվրոպական հիմքի վերականգնման սկզբունքներին էր նվիրված Կ. Հ. Շմիդտի (Բոնն, ԳՖՀ) զեկուցումը, որում նա մասնավորապես ընդգծում էր այդ հարցի լուսաբանման ժամանակ լեզվական փոխներթափանցումների և լեզվի ներքին զարգացման զործընթացների սահմանազատման անհրաժեշտությունը, ինչպես նաև լեզվական այն փոփոխությունների հաշվառման կարևորությունը, որ կրել է հայերենը նախահնդեվրոպականից անջատվելու և որպես ինքնուրույն, պատմականորեն վկայված լեզու հանդես գալու ժամանակամիջոցում։

Հ. Գ. Հերցենբերգը (Լենինգրադ) «Վաղնջահայերենի բաղաձայնական համակարգի վերականգնումը» զեկուցման մեջ՝ ելնելով քարթվելական լեզուներում պահպանված հ.-ե. փոխառությունների հնչյունական առանձնահատկություններից, վաղնջահայերենի բաղաձայնական համակարգին վերագրում է բաղաձայնական հերթագայությունների առկայություն։

Հայերենի համեմատական հնչյունաբանության առանձին հանգուցային հարցերի քննությանն էր նվիրված զեկուցումների մի ամբողջ շարք՝ «Նախապատմական հնչյունական փոփոխությունների պայմանների շուրջը» (Տ. Վեննեման, Մյունխեն, ԳՖՀ), «*ty-ի և *ts-ի զարգացումը հայերենում» (Ջ. Գրեպին, Քլիվլենդ, ԱՄՆ), «Հայերենի g-ի ծագման մասին» (Բ. Ա. Օլսեն, Կոպենհագեն, Դանիա), «Հնդեվրոպական *l-ի արտացոլումը հայերենում» (Մ. Ա. Աղաբեկյան, Երևան), որոնցում հեղինակները ներկայացնում են համեմատական նյութի իրենց դիտարկումները, առանձին դեպքերում անում են արժեքավոր ճշգրտումներ։

Կարդացվեցին զեկուցումներ նվիրված պայթականների և հպաշփականների տարբերակիչ հատկանիշների (Ա. Պիսովիչ, Կրակով, Լեհաստան), հպաշփականների և կիսաշփականների ենթահամակարգում նշանակրություն /ոչ նշանակրություն հակադրության (Ա. Հ. Խաչատրյան, Երևան), ձայնեղ հպականների շնչեղության և քմայնության նախնական աղերսի (Ա. Ն. Հանեյան, Երևան) լուսաբանությանը։

Հայերենի լեզվական կառուցվածքի առանձին կողմերի, հատկապես հնչյունաբանության հարցերի հետազոտման ժամանակ շարունակվում է հայ բարբառային նյութի օգտագործման պրակտիկան։ Մասնավորապես հայերենի բարբառների ընձեռած փաստերի հաշվառմամբ են աշխատում լուսաբանել այնպիսի երևույթներ, ինչպիսիք են վաղ հայերենում բառասկզբի յ-ի զարգացումը (Յ. Վայտենբերգ, Լեյդեն, Հոլանդիա), բառասկզբնային ձայնավորների զուգաձևությունները (Դ. Մ. Կոստանդյան, Երևան), պատմական հնչյունափոխության որոշ տեսակներ (Ա. Ե. Խաչատրյան, Երևան)։

Հայերենի բառապաշարի ուսումնասիրության հարցերին նվիրված զեկուցումներից առանձնահատուկ հետաքրքրություն առաջացրին Ջ. Բոլոնիեզիի (Միլան, Իտալիա) և Է. Շյուցի (Բու-

դապեշտ, Հունգարիա) զեկուցումները, որոնք լսվեցին լիագումար նիստում։ Տարբեր լեզուների բառային միավորների իմաստային զարգացման ընթացքի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեզվից լեզու կարող են փոխանցվել ոչ միայն բառեր, այլև բառային իմաստներ, բայց, ինչպես նշում է Ա. Մեյեն, դրանք ավելի դժվար է հայտնաբերել, քան բուն բառային փոխառությունները։ Ահա այս դժվարին և քիչ ուսումնասիրված բնագավառին էր վերաբերում Ջ. Բոլոնիեզիի զեկուցումը, որի մեջ նա անդրադարձավ հայերենի՝ հունարենից կատարած իմաստային փոխառություններին (պատճենումներին)՝ մանրամասն դիտարկելով «հետևակ բանակ»→«հետևակ խոսք»→«արձակ խոսք» իմաստային զարգացումը։ Է. Շյուցի զեկուցումը նվիրված էր միջին հայերեն տեքստերում տեղ գտած օտար բառերի հնչյունական արտահայտությանը, որի հիման վրա նա արժեքավոր հետևություններ է անում միջին հայերենի հնչյունական առանձնահատկությունների վերաբերյալ։

Վերջին տարիներս նկատվում է հետաքրքրության աճ համեմատական-իմաստաբանական հետազոտությունների նկատմամբ ոչ միայն մեզ մոտ, այլև արտասահմանում։ Ուսումնասիրվում են հայերենի հ.-ե. բառաշերտի առանձին բառերի, թեմատիկ-իմաստային բառախմբերի իմաստափոխական առանձնահատկությունները։ Այս տեսակետից հետաքրքրական էր Մ. Ջոզի (Բոխում, ԳՖՀ) «Իմաստափոխությունը մինչգրային հայերենում» զեկուցումը, որտեղ հեղինակը անդրադառնում է հայերեն մի շարք (ամպ, անձրև, երթալ, լանջք, լող, կեղև, կրակ, ձեռ, ջուր, տերև) բառերի նախագրային հայերենում կրած իմաստափոխություններին և գնահատում դրանք՝ ելնելով հ.-ե. լեզուների շարքում հայերենի գրաված դիրքից։

Հայերենի հ.-ե. ծագման արհեստագործական տերմինների իմաստային-տարածքային ուսումնասիրության ուղղությամբ կատարած իր աշխատանքի արդյունքները ներկայացրեց Մ. Հաննեյանը (Երևան)։

Գիտաժողովում լսվեցին նաև զեկուցումներ, որոնցում առաջարկվեցին առանձին բառերի ու արմատների նոր ստուգաբանություններ՝ ծով (Է. Սառուվերդե, Վիլնյուս), կատարվեցին ստուգաբանական ճշգրտումներ՝ նոր նյութի ընդգրկմամբ՝ երկն (Վ. Է. Օրյոլ, Մոսկվա), հ.-ե. *ghabh-/*kap— արմատի արտացոլումները հայերենում (Վ. Մ. Մկրտչյան, Երևան)։ Նախահնդեվրոպական «ուժ, հզորություն» նշանակությամբ արմատի հին հնդեվրոպական լեզուներում՝ նախահունարենում, էտրուսկերենում, խեթերենում, ինչպես նաև հայերենում առկա զուգահեռների քննությամբ հանդես եկավ Ջ. Ռասսելը (Նյու Յորք, ԱՄՆ)։

«Ուրիշ» հասկացություն արտահայտող դասական հայերենի «այլ» և «միւս» բառերի հունարեն զուգահեռների համեմատությամբ հայերենի իմաստային նրբերանգների վերաբերյալ իր դիտարկումները ներկայացրեց Ֆ. Մավեն (Բրյուսել, Բելգիա)։

Հայերենի լիճ, ծոր, եզր լանդշաֆտային տերմինների և մի քանի հնագույն տեղանունների և անձնանունների՝ Երեւան, Արարատ, Արամ, Մենուա, ստուգաբանություններով հանդես եկան Ֆ. Ա. Ելոևան (Լենինգրադ) և Ռ. Ա. Իշխանյանը (Երևան)։ Հայկական լեռնաշխարհի գետանունների ծագման և կառուցվածքային առանձնահատկությունների հարցերին անդրադարձավ իր զեկուցման մեջ Վ. Գ. Ջիհանյանը (Երևան)։

Առանձնապես մեծ էր հետաքրքրությունը հայերենի համեմատական ձևաբանության հարցեր արծարծող զեկուցումների նկատմամբ։ Յ. Ս. Ստեպանովի (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր հայերենում հնդեվրոպական կատարյալի համակարգային փոխակերպումների արտահայտություններին, որոնք դրսևորվում են վիճակ ցույց տվող բայերի խոնարհման, սեռականով ենթակա և կատարյալով ստորոգյալ ունեցող կառույցներում։

Հ.-ե. բայի մեկ այլ առանձնահատկության՝ սեռի կարգի վերաբերյալ իր զեկուցման մեջ Ռ. Ռ. Շմալստիգը (Պենսիլվանիա, ԱՄՆ), հետևելով Բրեալին և Ա. Դեսնիցկայային, առաջ է քաշում այն տեսակետը, որ հ.-ե. բայը սկզբնապես չի ունեցել սեռի հատկանիշ։ Իր այս վարկածը հաստատելու համար նա ներկայացնում է հ.-ե. որոշ լեզուների՝ լատիներեն, հայերեն, հին հնդկերեն, լիտվերեն, անցողական բայաձևերով հնագույն կառույցների և դրանց՝ անանցողական կառույցների փոխակերպման գործընթացի ուսումնասիրության արդյունքները։

Հ.-ե. -i̯o- և -i̯a- հիմքերով գոյականների հայերեն համապատասխանությունների հոլովական հարացույցների առանձնահատկությունները և այդ հիմքերն ունեցող հ.-ե. ածականների իգական սեռին պատկանելու հանգամանքը նկատի ունենալով Է. Պ. Համփը (Չիկագո, ԱՄՆ) նախահայերենի համար կանխադրում է սեռի քերականական կարգի գոյությունը։

Հին հայերենի -ն բաղաձայնահանգ հոլովման գոյականների հարացույցում հ.-ե. *-nt հիմքակազմիչի հետքերի բացահայտմանն էր նվիրված Ռ. Շտեմպելի (Բոնն, ԳՖՀ) զեկուցումը։

Լ. Ա. Սարաչևան (Երևան) «Հայ-բալթիական ձևաբանական զուգաբանություններ» զեկուցման մեջ քննելով այդ լեզուների անվանա-

կան և դերանվանական հոլովման հարացույցներում, բայական համակարգում և դերանվանական հիմքերի կազմության մեջ դրսևորվող ընդհանրությունները, գալիս է այն եզրակացության, որ հայերենի և բալթիական լեզուների մեջ մերձավոր կապեր են ի հայտ գալիս դերանվանական հոլովման բնագավառում։

Հայերենի դերանվանական հոլովման հարացույցում դրսևորվող տարահիմքության ծագման մեկնաբանությանն էր նվիրված Ս. Ռ. Հարությունյանի (Երևան) զեկուցումը։

Հայոց լեզվի պատմության և բարբառագիտության մասնաճյուղում լսվեցին 31 զեկուցումներ, որոնք աչքի էին ընկնում թեմատիկ բազմազանությամբ, հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքի ուսումնասիրության համար կարևոր հարցադրումներով։

Զեկուցումների մի զգալի մասը նվիրված էր նոր գրական հայերենի՝ աշխարհաբարի կազմավորման, նրա զարգացման տարբեր փուլերի առանցքային հարցերի լուսաբանությանը։ Ն. Ա. Պառնասյանի (Երևան) զեկուցման մեջ քննության էին առնված վաղ աշխարհաբարի կազմավորման պատմական նախադրյալների, նրա բարբառային հիմքի, լեզվական առանձնահատկությունների հետ կապված հարցեր։ Զեկուցողը պաշտպանեց այն տեսակետը, ըստ որի XVII դարի աշխարհաբարը դեռևս երկփեղկված չէր արևելահայ ու արևմտահայ տարբերակների։

XVIII դարի լեզվական բարդ իրավիճակի և գեղարվեստական գրականության տարաբնույթ ու անմիատարր լեզվի քննությանն էր նվիրված Շ. Լ. Նազարյանի (Երևան) զեկուցումը։ Փաստական հարուստ նյութի հիման վրա նա ցույց տվեց, որ լեզվաշինական տարբեր ուղղությունների առաջնորդների ու տեսաբանների նպատակը գրականության լեզուն ժողովրդին հասկանալի ու մատչելի դարձնելն էր։

Աշխարհաբարի՝ որպես գրականության լեզվի լինելության և գործառության հարցում էական դեր են խաղացել մեր մշակույթի գործիչները՝ քերականները, գրողները, թարգմանիչները։ Այս հարցերն էին արտացոլված գիտաժողովին ներկայացված մի քանի զեկուցումներում։ Հովհաննես Անկյուրացու գիտական գործունեության գնահատմանն էր նվիրված Հ. Դ. Միրզոյանի (Երևան) զեկուցումը։ Հեղինակը նշում է, որ Անկյուրացին առաջիններից մեկն էր, որ իր ինքնուրույն և թարգմանական աշխատությունները գրում է գրաբարախառն աշխարհաբարով, դրանով իսկ նպաստելով աշխարհաբարի՝ որպես գրական լեզվի, դիրքերի ամրապնդմանը։

Հայ միջնադարյան թարգմանական գրականության այլ երկերի՝ Ն. Պալիանենցի փոխադրած կաթոլիկ եկեղեցու ծիսարանի և «Գաւազանագրքի» բառապաշարի առանձնահատկություններին անդրադարձավ Յ. Հ. Վարդանյանը (Երևան) իր զեկուցման մեջ։ Նշելով գրանցում միջին հայերենի գրական և խոսակցական տարբերակներին հատուկ բազմաթիվ բառերի ու բառաձևերի առատությունը, ինչպես նաև միարարական մատենագրության այլ հուշարձանների բառապաշարային առանձնահատկությունները, նա եզրակացնում է, որ հայ միարար գործիչների մեջ ևս գերիշխել է ժողովրդին հասկանալի լեզվով գրելու և խոսելու միտումը։

Պատմական, հասարակական և լեզվական որոշակի հանգամանքների բերումով նոր գրական հայերենը՝ աշխարհաբարը իր զարգացման ընթացքում երկփեղկվեց երկու գրական լեզուների՝ արևելահայ և արևմտահայ։ Այդ լեզուների զարգացման միտումների, փոխհարաբերության, ինչպես նաև մերձեցման հարցերը միշտ էլ գտնվել են հայագետների (լինեն նրանք սփյուռքում, թե մայր հայրենիքում) գիտական հետաքրքրությունների շրջանակում։

Արևմտահայ գրական լեզվի բառապաշարի հետազոտության արդյունքների մասին էր Ա. Ե. Սարգսյանի (Երևան) զեկուցումը։ Հեղինակը կատարել է բառապաշարի ծագումնաբանական և համաժամանակյա դասակարգում, նշել արևմտահայերենի բառապաշարի զարգացման ուղղվածությունը, հետագա տեղաշարժերի ընդհանուր միտումները։

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների փոխհարաբերության քննությանը և նրանց զարգացմանը ըստ հնարավորին միասնական ուղղվածություն տալու խնդրին էին նվիրված երկու զեկուցում։ Ռ. Տեր-Մերկերյանը (Մարսել, Ֆրանսիա) իր զեկուցման մեջ ներկայացրեց արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարների զուգահեռ զարգացման գործընթացը՝ գրականության և մամուլի լեզվի քննությամբ վեր հանելով հայ գրական լեզվի այդ երկու տարբերակների բառաստեղծման բնագավառի՝ հատկապես փոխառությունների, նորակազմությունների առանձնահատկությունները։ Նորակազմությունների բնագավառում միօրինակության հասնելու նպատակով նա առաջարկում է ստեղծել մի հանձնաժողով՝ Հայաստանի տերմինաբանական կոմիտեի և սփյուռքի մամուլի ու գրական աշխարհի ներկայացուցիչներից։ Լ. Զեքիյանը (Վենետիկ, Իտալիա), քննելով սփյուռքի լեզվավիճակը, ցանկալի և հնարավոր համարեց արևելահայերենի և արևմտահայերենի համար միասնական լեզվական քաղաքականության մշակումը, ընդգծելով այդ խնդրի ազգային-հասարակական կարևորությունը։

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների նյութի քննությամբ ներակայման լեզվական և խոսքային տեսակների մանրակրկիտ վերլուծությունն էր ներկայացվում Ս. Գ. Աբրահամյանի (Երևան) ուշագրավ զեկուցման մեջ։ Ընդգծվում է ներակայման դերը լեզվի զարգացման գործընթացում, բառական, ձևաբանական, շարահյուսական մակարդակներում, ընդ որում նշվում է, որ կառուցվածքային մի մակարդակում հանդես եկող ներակայումը երբեմն կարող է իր անդրադարձն ունենալ այլ մակարդակում։

Մասնաճյուղի նիստերում կարդացվեցին զեկուցումներ՝ նվիրված հայերենի ժամանակային տարբեր կտրվածքների լեզվավիճակի հանրալեզվաբանական և էթնալեզվական հայեցակետերով կատարված քննությանը։ Վ. Մ. Գրիգորյանի (Երևան) զեկուցումը նվիրված էր միջնադարյան երկլեզվության պայմաններում հայերեն զուգալեզվության խնդրին։ Զեկուցողը այլ լեզուների համանման իրավիճակների հետ համեմատությունների միջոցով բացահայտում է հայերենի զուգալեզվության առանձնահատկությունները, գնահատելով այն որպես տիպաբանորեն եզակի երևույթ։

Այլ հանրապետություններում երկլեզվության պայմաններում հայերենի գործառության հարցին էին նվիրված Հ. Փ. Գալստյանի (Երևան) և Ջ. Ս. Պողոսովի (Դուշանբե) զեկուցումները։ ՍՍՀՄ մարդահամարների տվյալների վերլուծության հիման վրա Հ. Փ. Գալստյանը հանգում է այն եզրակացությանը, որ Անդրկովկասի հանրապետություններում՝ Վրացական ՍՍՀ-ում և Ադրբեջանական ՍՍՀ-ում, հայ-վրացական, հայ-ադրբեջանական երկլեզվության կողքին վերջին տարիներին նկատվում է եռալեզվությունը՝ ռուսերենի, որպես ազգամիջյան հաղորդակցման լեզվի տարածման հետ կապված։ Այդ հանրապետություններում հայոց լեզվի օգտագործման ոլորտների կրճատման պայմաններում դիտվում է հայ բնակչության լեզվական ուծացում։

Ջ. Ս. Պողոսովը ներկայացրեց Դուշանբեի հայ համայնքի պատմությունը՝ նրա կազմավորումից մինչև մեր օրերը։ Նա նշեց հայերենի իմացության աստիճանական նվազման փաստը, խոսեց Դուշանբեի հայերեն քաղաքային կոյնեի կառուցվածքային որոշ առանձնահատկությունների մասին։ Ե՛վ Հ. Փ. Գալստյանը, և՛ Ջ. Ս. Պողոսովը ընդգծեցին ազգային լեզվով գործող դպրոցների բացակայության բացասական հետևանքները։

Էթնալեզվական մի կնճռոտ խնդրի լուսաբանությունն էր նվիրված Ա. Հ. Հակոբյանի և Հ. Փ. Գալստյանի համատեղ զեկուցումը։ Հեղինակները պատմագիտական տվյալների վերլուծության հիման վրա ներկայացնում են բուն Աղվանքի էթնալեզվական գործընթացները մ. թ. ա. IV դ. մինչև մ. թ. XI—XIII դդ. և աղվանական ցեղերի էթնիկ փոխակերպության ընթացքն ու արդյունքները։

Գիտաժողովին ներկայացված երկու զեկուցում նվիրված էին հայերենի համեմատական-տիպաբանական ուսումնասիրությանը։ Ա. Գ. Մարտիրոսովը (Թբիլիսի) հին հայերենի և հին վրացերենի տվյալների զուգադրական-տիպաբանական վերլուծությամբ բացահայտեց որոշյալություն-անորոշության կարգի ծագումնաբանական-գործառական առանձնահատկությունները և հետագա զարգացումը։ Է. Ռ. Աթայանը (Երևան) «Արդի հայերենի տիպաբանական որոշ առանձնահատկությունների պատմահամեմատական վերլուծության փորձ» զեկուցման մեջ անդրադարձավ լեզուների պատմական և համեմատական տիպաբանության նպատակներին ու խնդիրներին, ընդգծելով ձևաբանության տիպաբանական ուսումնասիրության կարևորությունն ու արդյունավետությունը։ Նա խոսեց հայերենի ձևաբանական-տիպաբանական բնութագրի մեջ ճշգրտումներ մտցնելու անհրաժեշտության մասին՝ առաջարկելով ճշգրտել նաև ավանդաբար ընդունված որոշ տերմիններ։

Մի շարք զեկուցումներ նվիրված էին հայոց լեզվի զարգացման տարբեր ժամանակաշրջանների լեզվական առանձին երևույթների և առանձին ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունների քննությանը։ Այսպես՝ Ն. Ա. Կուլինցևան (Լենինգրադ) կարդաց զեկուցում հին հայերենի երկրորդական ստորոդյալով կառույցների և դրանց պատմական զարգացման ընթացքի մասին։ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի զեկուցումը նվիրված էր ասորերենից կատարած դասական հայերեն թարգմանությունների շարահյուսական առանձնահատկություններին։ Հայ գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերության ուսումնասիրության համար արժեքավոր նյութ էր ընդգրկված Ռ. Դանկոֆֆի (Չիկագո, ԱՄՆ) «Խոսակցական բառերը Մնձուրիի երկերում» զեկուցման մեջ։

Լ. Գ. Բրուտյանի (Երևան) զեկուցումը նվիրված էր Դավիթ Անհաղթի աշխատություններում շաղկապների վերլուծության հարցին, որի մեջ նա բարձր է գնահատում Դավթին որպես քերականի և ընդգծում տեքստի ստեղծման ու մեկնաբանման գործում շաղկապներին կարևոր դեր հատկացնելու Անհաղթի գաղափարը, որը վերջին տասնամյակներում ավելի ու ավելի լայն տարածում է ստանում՝ կապված տեքստի քերականության զարգացման հետ։

Հայոց լեզվի կարգացման ընդհանուր օրինաչափությունների վերհանմանն էին նվիրված Հ. Լ.

Զաքարյանի (Երևան) «Համասեռության միասումը հայերենում» և Ա. Ս. Աբրահամյանի «Քերականական իմաստի և քերականական ձևի փոխհարաբերության զարգացման հիմնական դրսևորումները հայոց լեզվի պատմության մեջ» զեկուցումները։

Տեքստի լեզվաբանության հարցերն էին արծարծվում Ս. Տ. Զոլյանի (Երևան) «Շարականների ցուցարանությունը» և Բ. Կ. Ղազարյանի (Երևան) «Հայերենի վերաբերականները» զեկուցումների մեջ։ Ս. Տ. Զոլյանը փորձել է ուսումնասիրել շարականների ժանրին պատկանող տեքստերի կառուցվածքը, ինչպես նաև նրանց գործարանությունը։ Երկրորդ զեկուցման մեջ պատմական վերլուծության են ենթարկվում հայերենի մի քանի վերաբերականներ, նշվում են նրանց իմաստային և գործառական զարգացման առանձնահատկությունները։

Հայ լեզվաբանության պատմության հարցերին էին նվիրված Վ. Գ. Համբարձումյանի (Երևան) «Վրթանես Քերթողի և «դասական հայերենը» և Ա. Ն. Սրապյանի (Երևան) «Լեզվի և գրչության դերի հարցերը միջնադարյան քերականների գործերում» զեկուցումները։ Վ. Համբարձումյանը ներկայացրեց Ջալըխյանի քերականագիտական գործունեությունը և զարգացրեց այն տեսակետը, որ «դասական հայերենի» ասանձնացումը կապվում է նաև Ջալըխյանի անվան հետ։ Ա. Սրապյանն իր զեկուցման մեջ խոսեց լեզվի ծագման ու զարգացման, նրա մաքրության ու պահպանության հարցերի վերաբերյալ հայ միջնադարյան քերականների ու մեկնիչների տեսակետների մասին։

Մ. Ա. Բագրամյանը (Ստեփանակերտ) իր զեկուցման մեջ ներկայացրեց Ղ. Աղայանի լեզվագիտական հայացքները։

Հայ գրի պատմության հարցերին էր նվիրված Ս. Ն. Մուրավյովի (Մոսկվա) . «Կովկասի հին այբուբենները, դրանց տարբերություններն ու նմանությունները, դրանց ցեղակցության խնդիրը» ուշագրավ զեկուցումը։ Ամփոփելով և ի մի բերելով Կովկասի հին այբուբենների վերաբերյալ իր նախորդ ուսումնասիրությունների արդյունքները՝ նա ներկայացրեց այդ երեք՝ հայկական, վրացական, աղվանական, այբուբենների ծագումնաբանական-տիպաբանական ընդհանրություններն ու հարաբերական ժամանակագրությունը, որոնք հաստատում են այդ հարցի վերաբերյալ հայ պատմագրության տվյալների հավաստիությունը։

Լ. Բ. Զուգասզյանի (Երևան) զեկուցումը մասամբ հարում էր նախորդին («Մաշտոցյան այբուբենը և հայ մանրանկարչությունը»), բայց այս դեպքում զեկուցման նյութը ոչ թե այբբենաստեղծման առանձնահատկություններն էին, այլ հայ գրչագիր մատյանների ծաղկողների, մասնավորապես Թորոս Ռոսլինի զարդագրերի արվեստագիտական վերլուծության հարցերը։

Գիտաժողովին ներկայացված երկու զեկուցում նվիրված էին հին հայերենի հնչերանգի ուսումնասիրությանը։ Ն. Թահմիզյանը (Երևան) անդրադարձավ հին գրական հայերենի հաստատական նախադասության ելևէջային կողմին։ Ուսումնասիրության հիմք ունենալով հայկական դյուցազնավեպի ու վիպերգերի ասերգային հատվածները և եկեղեցական թվերգը, որոնցում ընդհանուր գծերով պահպանված են խոսքի ու երաժշտության զուգորդության հին և միջնադարյան ձևերը, նա հանգում է այն եզրակացության, որ հին գրական հայերենի նախադասության ելեէջը կապված է խոսակցական լեզվի երաժշտական կողմի հետ։

Լ. Հ. Հակոբյանի (Երևան) զեկուցումը նվիրված էր հին հայկական օրհներգերի բանաստեղծական և երաժշտական շեշտադրության կապի հարցին։ Ելնելով օրհներգերի տաղաչափության և մեղեդու փոխհարաբերության դիտարկումներից, նա ենթադրում է, որ օրհներգերի մեղեդային կառուցվածքը գրական հայերենի զարգացման վաղ շրջանին բնորոշ շեշտադրական համակարգի վերապրուկ է։

Ա. Կ. Ռուսակովի (Լենինգրադ) զեկուցման նյութը հայ գնչուների՝ բոշաների բարբառի լեզվական կարգավիճակի (ստատուսի) որոշման հարցն էր։ Փաստական նյութի քննությամբ նա ժխտում է այն կարծիքը, ըստ որի բոշաների բարբառը համարվում էր հայոց լեզվի բարբառ։

Հայ բարբառագիտության առանձին հարցերին նվիրված զեկուցումների ամփոփիչ տեսությամբ հանդես եկավ Ա. Ե. Խաչատրյանը (Երևան)։ Այդ զեկուցումները վերաբերում էին առանձին տարածքների բարբառների և բարբառային իրողությունների նկարագրությանը [«Անատոլիայի չուսումնասիրված հայ բարբառները», Ն. Ա. Մկրտչյան (Երևան), «Առկայացման քերականական կարգը Անտիոքի տարածքի հայ բարբառներում», Գ. Կ. Հանանյան (Երևան), «Շարահյուսական ներկան հայերենի բարբառներում», Գ. Գ. Գևորգյան (Երևան), «Օրվա երեք պահերի (առավոտ, կեսօր, իրիկնապահ) անվանումները հայերենի բարբառներում», Ջ. Ա. Բաղմասյան (Երևան)], ինչպես նաև ազգագրական բարբառային նյութի օգտագործմամբ առանձին բառերի ստուգաբանությանը [«Ամուսնական զույգ նշող հայերենի տերմիններն իբրև ընդհանրական փոխանակության արտացոլում», Ջ. Վ. Խառատյան (Երևան), «Ազի, ճասի բարբառային տերմինները հայ ազգակցական տերմինաբանության մեջ», Բ. Ե. Զաքարյան (Երևան)]։

Տեքստաբանության, բառարանագրության և բառագիտության մասնաճյուղում կարդացվեցին 22 զեկուցումներ։ Կային և՛ բանասիրական-տեքստաբանական ճշգրտումներ, և՛ հայերենի բառապաշարի ժամանակային տարբեր կտրվածքների, ծագումնաբանական և գործառական տարբեր շերտերի բառապաշարի ուսումնասիրությանը նվիրված զեկուցումներ։

Հայ հին գրական երկերի՝ թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական, բառապաշարի ու լեզվական կառուցվածքի, թարգմանության առանձնահատկությունների, առանձին բառերի ու բառակապակցությունների թարգմանության և մեկնաբանության հարցերը շարունակում են հետաքրքրել հայագետներին։ Այդ չմարող հետաքրքրության արտահայտությունն էին այս գիտաժողովին ներկայացված զեկուցումները։ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի գրական մշակման բարձր մակարդակ ունեցող լեզվի ու հարուստ բառապաշարի, ինչպես նաև ոճական-ճարտասանական առանձնահատկությունների վերլուծությանն էր նվիրված Ա. Տերյանի (Չիկագո, ԱՄՆ) զեկուցումը։

Խորենացու «Հայոց պատմության» մեջ գործածված երկու բառակապակցությունների՝ «երգէր ձեռամբ» և «Հայոց մեծաց» թարգմանությունների ճշգրտումն էր առաջարկում իր զեկուցման մեջ Հ. Խ. Բարսեղյանը (Երևան)։

Առանձին զեկուցում էր նվիրված Ալեքսանդր Մակեդոնացու պատմության թարգմանության լեզվի բառապաշարի քննությանը (Հ. Ա. Սիմոնյան, Երևան). Խորենացուն վերագրվող այս թարգմանության շուրջ 70 ձեռագրերի համեմատական-բառաքննական ուսումնասիրությամբ զեկուցողն առանձնացնում է հունարենից կատարված փոխառություններն ու բառապատճենումները, նորաստեղծ բառերը, եզակի և սակավադեպ բառերը, որոնք մտել են գրաբարի բառագանձի մեջ։

Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց»-ի հայերեն թարգմանության մեջ հունարենի շարահյուսական մի ուշագրավ կառույցի՝ բացարձակ սեռականի թարգմանության միջոցների մասին հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ Գ. Ուլուհոջյանը (Բոլոնիա, Իտալիա)։ Մ. Վան Էսբրոկը (Բրյուսել, Բելգիա) ներկայացրեց Բարսեղ Կեսարացուն վերագրվող մի համառոտ երկասիրության՝ բանասիրության համար ունեցած նշանակությունը և այլ լեզուներում՝ ղպտերենում, ասորերենում, արաբերենում, հունարենում պահպանված զուգահեռների քննությամբ փորձեց ճշտել ձեռագրի ծագման տվյալները՝ 452 թ., Երուսաղեմ։

Հայերենի և հարևան լեզուների (հ.-ե. և ոչ հ.-ե.) բառապաշարային կապերի լուսաբանությանն էին նվիրված մի շարք զեկուցումներ

Հայ. ղտկի: «բանակատեղ» բառի ծագման ճշգրտման և այլ լեզուներում վկայված զուգահեռների քննությանն էր նվիրված Ա. Ն. Փերիխանյանի (Լենինգրադ) զեկուցումը։

Հայերենի՝ իրանական լեզուներից կատարած փոխառությունների հնչյունական և ձևաբանական տարբերակները փաստական հարուստ նյութի ընդգրկմամբ ներկայացրեց Լ. Հովհաննիսյանը (Երևան) «Իրանական արմատների դրսևորումները հայերենում» զեկուցման մեջ։

Վրացերենի՝ հայերենի միջոցով կամ անմիջարար միջին իրանական լեզուներից կատարած փոխառությունների հնչյունական առանձնահատկությունների վերաբերյալ հետաքրքիր զեկուցում կարդաց Մ. Կ. Անդրոնիկաշվիլին (Թբիլիսի), իսկ քրդերենի՝ հայերենից կատարած փոխառությունների մասին իր ընդհանուր նկատառումները ներկայացրեց Գ. Ս. Ասատրյանը (Երևան)։

Պետք է նշել, որ վերջին ժամանակներս նկատվում է ցեղակից լեզուների ժամանակակից վիճակների կառուցվածքային և տիպաբանական ընդհանրությունների ուսումնասիրության միտում։ Դրա արտահայտությունն էր «Ժամանակակից հայերենը և նոր հնդարիական լեզուները» (Ի. Տ. Զոգրաֆ. Գ. Ա. Զոգրաֆ, Լենինգրադ) զեկուցումը։ Դիտարկելով ժամանակակից հայերենի և նոր հնդարիական լեզուների կառուցվածքային-տիպաբանական մի քանի համապատասխանություններ՝ մասնավորապես անվանական հոլովման և բայի դիմավոր ձևերի հարացույցներում, հեղինակները ընդգծում են այդ ծագումնաբանորեն ցեղակից, բայց երկար ժամանակ իրարից կտրված լեզուների կառուցվածքային նմանատիպ զարգացման պատճառների բացահայտման անհրաժեշտությունը։ Նրանք առաջ են քաշում SOV (ենթակա-խնդիր-ստորոգյալ) քերականական շարադասության՝ իբրև ձևաբանական համակարգի նմանատիպ կազմավորումը նախորոշող կառուցվածքային առանձնահատկություն լինելու վարկածը։

Գիտաժողովում արծարծվեցին նաև բառագիտական-իմաստաբանական և մի շարք այլ հարցեր։

Մեծ էր գիտաժողովի ունեցած նշանակությունը հայագիտության զարգացման համար։ Նրանում ամփոփվեցին վերջին տարիների հայերենագիտական ուսումնասիրությունների արդյունքները, նշվեցին հայագիտության հետագա զարգացման հեռանկարները։ Գիտաժողովը ցույց տվեց այն չմարող հետաքրքրությունը, որն առկա է հայոց լեզվի ուսումնասիրության նկատմամբ թե՛ արտասահմանում, թե՛ մեզ մոտ։

Ն. Մ. ՍԻՄՈՆՅԱՆ